# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՀ, 0015, ք. Երևան Արգիշտի 1, հեռ.՝(+374 11) 514 200, ֆաքս (+374 11) 514 004 էլ.փոստ՝ mayor@yerevan.am

№ 01/12-91213

«04» 02 201 թ.

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հարությունյան

Ի լրումն Երևանի քաղաքապետի՝ 26.12.2018թ.հ.02/12-91213 գրության՝ Երևանի հ.6 արհեստագործական պետական ուսումնարանին Երևանի հ. 185 դպրոցի ազատ տարածքը տրամադրելու վերաբերյալ, տեղեկացնում ենք, որ նշված դպրոցի առանձին մուտքով ազատ տարածքը 1-ին հարկում կազմում է 400 քմ, 2-րդ հարկում՝ 380 քմ: Երկրորդ մասնաշենքում առկա է ևս 440 քմ ազատ տարածք, որը նույնպես կտրամադրվի:

Նշեմ, որ 3-րդ հարկը տրամադրել չենք կարող, այնտեղ կազմակերպվում է տարրական դասարանների աշակերտների դասապրոցեսը, որտեղ տեղակայված են 8 դասարան՝ 194 աշակերտով:

Արդյունքում ուսումնարանին կտրամադրվի 1220 քմ տարածք:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Հ.ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Մուտք № 4497
«07» 02 2019 թ.

Կատ.՝ Ա.Ստեփանյան
Հեռ.՝ 011 514247